

## ՄԱՍԻՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### **Կոռուպցիայի ընկալման համաթիվ 2015թ. Կոռուպցիան դեռևս համատարած քնույթ է կրում, բայց 2015թ. կան նաև հուսադրող արդյունքներ**

#### ***Թրանսփարենսի Ինթերնեշնլը կոչ է անում, որ մարդիկ ամենուր հանդես գան կոռուպցիայի դեմ***

**Երևան, 27 հունվարի 2016 թ.:** 2015 թվականը ցույց տվեց, որ գործադրելով համատեղ ջանքեր՝ մարդիկ կարող են հաջողության հասնել կոռուպցիայի դեմ պայքարում: Չնայած կոռուպցիան դեռևս համատարած քնույթ է կրում աշխարհում, բայց ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ (ԹԻ) համաշխարհային հակակոռուպցիոն ոչ կառավարական կազմակերպության 2015թ. Կոռուպցիայի ընկալման համաթվի (ԿԸՀ) հրապարակման, ԿԸՀ արդյունքների բարելավում արձանագրած երկրների թիվը գերազանցում է նահանջ արձանագրած երկրների թվին:

Ընդհանուր առմամբ՝ դասակարգման աղյուսակում ներառված 168 երկրների երկու երրորդի ԿԸՀ արժեքը 50 միավորից ցածր է 0-ից 100 սանդղակում, որտեղ 0-ն նշանակում է, որ երկիրն ընկալվում է որպես բացարձակապես կոռումպացված, իսկ 100-ը՝ որպես բացարձակապես մաքուր:

Այդուհանդերձ, 2015թ. որոշ երկրներում, ինչպիսիք են՝ Գվատեմալան, Շրի Լանկան և Գանան, ակտիվ քաղաքացիները, աշխատելով և՛ խմբերով, և՛ անհատապես, ավելի մեծ ջանքեր գործադրեցին կոռումպացված պաշտոնյաներին իրենց զբաղեցրած պաշտոններից դուրս շարտելու ուղղությամբ, ինչը հզոր ազդակ էր՝ խրախուսելու մյուսներին ձեռնարկելու վճռական քայլեր 2016-ին:

*«Կոռուպցիան կարելի է հաղթահարել, եթե միասին աշխատենք: Որպեսզի արմատախիլ արվի իշխանության չարաշահումը, կաշառակերությունը և լույս սփռվի գաղտնի գործարքների վրա, քաղաքացիները պետք է համատեղ ուժերով իրենց իշխանություններին հասկացնեն, որ այլևս չեն հանդուժելու տիրող իրավիճակը: Կոռուպցիայի ընկալման 2015թ. համաթիվը հստակ ցույց է տալիս, որ կոռուպցիայի ազդեցությունը շարունակում է մնալ կործանարար ողջ աշխարհում: Բայց 2015-ը նշանավորվեց նաև նրանով, որ մարդկանց նորից փողոց դուրս բերեց՝ պայքարելու ընդդեմ կոռուպցիայի: Ողջ աշխարհում հզոր ազդանշան ուղարկվեց իշխանավորներին՝ հասկացնելով, որ ժամանակն է պայքարել իշխանության վերին օղակներում տիրող կոռուպցիայի դեմ», - ասում է Թրանսփարենսի Ինթերնեշնլի նախագահ պարոն Խոսե Ուգալը:*

Իշխանության վերին օղակների կոռուպցիան կամ մեծ կոռուպցիան (grand corruption) բարձր մակարդակի իշխանության չարաշահումն է, ինչը շահեկան է փոքրամասնության համար՝ ի վնաս

մեծամասնության, և լուրջ ու մեծ չափով վնաս է հասցնում անհատներին ու հասարակությանը՝ հաճախ մնալով անպատիժ:

Այս տարի Թրանսփարենսի Ինթերնեշնլը կոչ է անում քվեարկել «Դիմակազերծե՛ք կոռուպացվածներին» քարոզարշավի շրջանակում՝ <https://www.unmaskthecorrupt.org/> կայքում: ԹԻ-ն ցանկանում է պարզել, թե կոռուպցիոն հատկապես որ դեպքերն են հանրության կարծիքով արժանի մեծ ուշադրության, որին նա հետամուտ կլինի որպես մեծ կոռուպցիայի դեմ պայքարի ճակատ:

ԿԸՀ արժեքի առավել մեծ նահանջ արձանագրել է Բրազիլիան, որի համաթիվը նվազել է 5 միավորով, իսկ դիրքն աղյուսակում՝ 7-ով՝ իջնելով մինչև 76-րդ հորիզոնականը: 2015թ. «Պետրոբրազ» նավթային ընկերության հետ կապված սկանդալը մարդանց փողոց դուրս բերեց և դրան առնչվող դատական գործընթացի սկիզբը կարող է օգնել Բրազիլիային՝ կանգնեցնելու կոռուպցիան:

Կոռուպցիայի դեմ պայքարի հաջողված պատմությունների, այս թվում՝ [Մոնոլիայի](#), [Գվատեմալայի](#), [տեղեկություններ հաղորդողների \(ագոադարների\)](#) և ԹԻ ցանցի ավելի քան 100 մասնաճյուղերի մասին կարող եք ծանոթանալ՝ այցելելով Թրանսփարենսի Ինթերնեշնլի [www.transparency.org](http://www.transparency.org) կայքը:

## Արդյունքներ

Թի 2015թ. ԿԸՅ-ն ներկայացնում է հանրային ոլորտում կոռուպցիայի ընկալումը 168 երկրներում:

Երկրորդ տարին անընդմեջ Դանիան զբաղեցնում է ԿԸՅ դասակարգման աղյուսակի առաջին հորիզոնականը, իսկ աղյուսակի վերջին տեղը նորից կիսում են Յյուսիսային Կորեան և Սոմալին՝ 8 միավորով:

Աղյուսակի վերին հորիզոնականում գտնվող երկրներին բնորոշ է մամուլի ազատության բարձր մակարդակը, բյուջեի մասին տեղեկատվության հասանելիությունը, երբ հանրությունը տեղյակ է, թե որտեղից է գումարը գոյանում և ինչպես է այն ծախսվում: Բարձրաստիճան պաշտոնյաներն աչքի են ընկնում օրինավորության (բարեվարքության) բարձր մակարդակով, իսկ դատավորները տարբերակված մոտեցում չեն ցուցաբերում հարուստների ու աղքատների միջև և իրապես անկախ են իշխանության մյուս ճյուղերից:

Բացի հակամարտություններում ու պատերազմներում ներթաշված լինելուց՝ վատ կառավարումը, թույլ հանրային ինստիտուտները, օրինակ, ոստիկանությունն ու դատական իշխանությունը, և անկախության բացակայությունը լրատվամիջոցներում բնորոշ են այն երկրներին, որոնք աղյուսակի ստորին հորիզոնականներն են զբաղեցնում:

Վերջին 4 տարիների ընթացքում ԿԸՅ արժեքների առավել մեծ նահանջ են արձանագրել Լիբիան, Ավստրալիան, Բրազիլիան, Իսպանիան և Թուրքիան, իսկ ԿԸՅ արժեքների առավել զգալի աճ են գրանցել Յունաստանը, Սենեգալը և Միացյալ Թագավորությունը:

Թի Կոռուպցիայի ընկալման համաթիվը հիմնված է հանրային ոլորտում կոռուպցիայի վերաբերյալ փորձագիտական կարծիքների վրա: ԿԸՅ արժեքները կարող են բարելավվել բաց կառավարման շնորհիվ այն երկրներում, որտեղ հանրությունը կարող է ղեկավարներին հաշվետու պահել: ԿԸՅ ցածր արժեքը մատնանշում է լայնատարած կաշառակերության, կոռուպցիայի անպատժելիության և քաղաքացիներ կարիքներին անհաղորդ հանրային ինստիտուտների առկայությունը:

###

Հայաստանի ԿԸՅ 2015թ. արժեքը հավասար է 35-ի և այժմ նա Մալիի, Մեքսիկայի և Ֆիլիպինների հետ միասին կիսում է 95-ից 98-րդ տեղերը, որը համարյա նույնն է, ինչ 2014թ, երբ այն կիսում էր 94-ից 99-րդ տեղերը: Իհարկե, պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ 2014թ. 175-ի փոխարեն 2015թ. ԿԸՅ դասակարգման աղյուսակում ընդգրկված է 168 երկիր և տարածք:

Նախորդ տարիների նման, Եստոնիան շարունակում է մնալ նախկին կոմունիստական երկրների առաջատարը իր ԿԸՅ 70 արժեքով (2014թ. այն հավասար էր 69-ի): ԿԸՅ դասակարգման 2015թ. աղյուսակում Չիլիի, Ֆրանսիայի և Արաբական Միացյալ Էմիրությունների հետ միասին Եստոնիան

կիսում է 23-ից 26-րդ տեղերը: Հայաստանը շարունակում է զիջել Արևելյան և Հարավային Եվրոպայի համարյա բոլոր երկրներին, բացառությամբ Կոսովոյի, իսկ նախկին խորհրդային հանրապետություններից զիջում է բալթյան հանրապետություններին և իր հարևաններ Կրաստանին, որի 2015թ. ԿԸՀ արժեքը (52) մնացել անփոփոխ: Իր հարևաններից Հայաստանը շարունակում է զիջել նաև Թուրքիային (42), որը 2015թ. գրանցել է եական նահանջ՝ 2014թ. համեմատ (45 միավոր): Հայաստանի մյուս երկու հարևանների՝ Ադրբեջանի և Իրանի, 2015թ. ԿԸՀ համաթվերը 2014թ. համեմատ մնացել են անփոփոխ (համապատասխանաբար՝ 29 և 27 միավոր)՝ նախորդ տարիների նման զիջելով Հայաստանին: Հայաստանին շարունակում են զիջել նաև Եվրասիական միության անդամ մյուս երկրները: Բելառուսն իր ԿԸՀ 32 միավորով (նախորդ տարի՝ 31 միավոր) ԿԸՀ 2015թ. դասակարգման աղյուսակում կիսում է 107-111-րդ տեղերը, Ռուսաստանը 29 միավորով՝ 119-122-րդ տեղերը (նախորդ տարի՝ 27), իսկ Ղազախստանն ու Ղրղզստանը 28 միավորով կիսում են 123-129-րդ տեղերը:

###

*Թրանսփարենսի Ինթերնեշնլը կոռուպցիայի դեմ պայքարող քաղաքացիական հասարակության առաջատար համաշխարհային կազմակերպություն է:*